891.542-2
2 85

19285

891.99
O-45

600

№ 2003

891.99
О-455
36463

Գրքոյկ առաջին.

# ԼՕՏՕ

## ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

2 արարողութեամբ

Աշխատասիրութիւն
ՅԱՐՈՒԹԻՒՆԻ
ՅՕՀԱՆԶԱՆԵԱՆ

ԵՐԵՒԱՆ
Ի Տպարանի Զաքարիա Գ. Յակոբեանց.
1876

2874

Дозволено Цензурою Тифлисъ. 26 Августа
1876 года.

# ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Եղիսաբէթ տիկին
Վարդուհի տիկին } Կարնեցիք։
Շողակաթ տիկին

Ջուխվսիմէ տիկին
Արբուհի տիկին } Գարսեցիք

Կատարինէ տիկին
Գայիանէ տիկին } Տփխիսեցիք.

Մարիամ տիկին, ուսումնասէր ոմն։

Հերիքնազ, Եղիսաբեթ տիկնոջ փոքրիկ աղջիկը։

Յօսիփ Պետրօվիչ, Շողակաթ տիկնոջ մեծ որդին . . . } քաղաքական<br>
Իւան Անդրէեվիչ, Հռիփսիմէ տիկնոջ եղբայրը . . . } աստիճանաւորք

Նաղութ<br>
Ջաւահիր } Սպասաւորուհիք։

# ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ 1.

Տեսարանն է Եղիսաբեթի տանը Ա․․ քաղաքի մէջ։ Վարագոյրը վերցնելիս ներկայացնում է բաւականին մաքուր Եւրոպական ձևով զարդարուած դահլիճ, որի մէջ տեղը [illegible] դրուած չինի կլօրակ սեղան, սպիտակ պաստառակալով ծածկուած, սեղանի շուրջը 12-ի չափ նստարաններ դրուած։ Եղիսաբեթը տիկինը շատ անհամբեր շրջելով դահլիճի մէջ պիտի սպասէ հիւրերին, երբոյ նստելով հայելու դէմը պիտի առէ։

## ԵՂԻՍԱԲԵԹ.

Ամա՛ն հողս ատոնց գլխուն, սահաթը եղաւ երկուսը դլոչէն դար, աման Աստուած, ասպէսա կրակ կլէնայ, ղայֆանայ էփաւ, թափաւղոնաղ կէնես կրակ, չես էներ կրակ, ըստոնա սատկի իրենքա, հըմը ի՞նչ պէտի էնես, սըրաէ մէ անգամ ընկեր ենք ատոնց կրուզին մէջը, պէտի քաշենք, ի՞նչ է հէչ չէ բէմուրաշները

Թեզմ գային, փարէ մը քանիմ կրուղ ալէ խօ կ՚կրէի։

ԶԱՌԱՀԻՐ (Ներս վազելով)։

Խա՛նում, Գարան խանումն ու Կատար խանումը տիհա դուռնեն, հիմի կուգան կը։

ԵՂԻՍԱԲԵԹ (ճարպկանալով)։

Տէ գնա, հոգս գլխուդ, սալօպները վար առ կալօշները հանէ (Զառահիրը գնում է հիւրերը ներս են մտնում)։

ԳԱՅԱՆԷ՝

Բարիվ քիզ, Ելիսավետա Անդրէևնա, վունցէք լաւէք, շատ սպասած կուլէք մը։

ԿԱՏԱՐԻՆԱՅ

Բա՛ ղոնաղերդ ո՞ւր են, դեռ չե՞ն էկէլ։

ԵՂԻՍԱԲԵԹ

Ո՜ւր է թէ էկեր են, փանձրեցեն աշէլով հոգիս էլաւ, ապքանա յուշանալ կը ըլէնայ սահաթը հըմը հըմը յիրէքին վրանէ, տէյիմօր հիմի գալած օրս ը ըլէնայինէ եփէի ժամանակ անցուցերէինք։

ԿԱՏԱՐԻՆԱՅ

Յիս խօմ շուտ պիտի գայի, ամա աղէն տանը չէր, էնդու համար էլ էսքան յիգացայ, թէ չէ խօմ գիտիս յիս փունցիմ սիրում ըստօն։



ԵՂԻՍԱԲԵԹ

Բա՛, եավաշէք փայլըխըմ մըմա մարդ ղըկեմ յէտևները, էկան էկան, չէկան խա, մենք նըստինք յիրէքով խաղանք, գլօխնի քար ի՞նչ կըլէնայ թող ըլէնայ։ (Բարեւը չտալով)․ Աղջի Եա՛ղութ, Զառահիր . . .

ԵԱՂՈՒԹ

Ի՞նչ կըսէիր խանում։

ԵՂԻՍԱԲԵԹ

Գնա մէմ պօվրին ըսայ թէ, թող վազէվազ էրթայ, Մարիամ խանումին, Շողակաթ խանումին, Վարդուն խանումին, Սրբուհի խանումին, Հօռօմսիմայ խանումին, ըսէ թէ, խանումն շատ բարև էրաւ թէ, թող թէզ էնեն հրամմեն զան, Գարան խանումն ու Կատար խանումնա վաղուց է որ էկերեն, յետև Եաղութ, արի մեզի համար մէկ մէկ ստաքան ղայֆայ ներս բեր, բուլկին ու գիւլանկինայ նեսը սպաննին կամօտիս վրայ հաղըրէ։ (Եաղութը գնում է)։

ՀԵՐԻՔՆԱԶ (վազելով)։

Մամա ջան, էրթամ լօտօյին թղթերը շարեմ։

ԵՂԻՍԱԲԵԹ (ճարպկութեամբ)։

Ա՜յ հոգս գլխուդ, ես չեմ կրնար շարեր օր

դու շարես, դու ի՞նչ գիտես թէ, քա՞նի հոգի պիտի խաղան։

ՀԵՐԻՔ՛ՆԱԶ

Հա՛, ինչի՞ չեմ գիտէ օր, իշտը ինձնով ութը հոգի կըլլէնայ կը։

ԵՂԻՍԱԲԵԹ

Զուռնա գլխուդ, գո՞ւնա միտք ունիս խաղլու հա, մենք չրաղ էղանք, հիմի դուն պիտի չըրաղ ըլլէնաս. է՛ փարադ ո՞ւրտից է, տըվօղայ պիտի ըլլէնա՞յ թէ չէ։

ՀԵՐԻՔ՛ՆԱԶ

Հա, ինչի՞, կերթամ պապաշէս կառնեմ։

ԳԱՅԱ՛ՆԷ

Դա, ի՞նչիս ուզում թուղ խաղայ վուր սորվի, քանի ջայիլ է։

ԿԱՏԱՐԻ՛ՆԷ

Թէ չէ իժում վուր մարդի գնայ ամաչկոտ կուլի։

ԵԱՂՈՒԹ (սուրճը բերում)։

Հրամմեցէք, ղայֆայ առէք (վեր են առնում)։

ԳԱՅԱ՛ՆԷ

Էմա ի՞նչ լաւ էփածէ, կասենաս ռուսի շինած ըլի ա՞յ։



ԿԱՏԱՐԻ՛ՆԷ

Տրո՞ւստ, տրո՞ւստ։

ԵՂԻՍԱԲԵԹ

Հա՛, քա մեր բեմուրադ լաքէն անպէս ղայֆայ կեփէ օր մարդու հաւասը գուգայ, արթըղ մէ օլմազ բանմէ, յանօրը կաղնաչէին կընիկն ալ շատ հաւնեցաւ։

ԳԱՅԱ՛ՆԷ

Կասենաս էդ ռուսներին տուած ըլի ամէն բանի մէջ խտակութինը։

ԿԱՏԱՐԻ՛ՆԷ

Բաս չէ ու մեր մունտուիկ հայերի ընկերըն ըլին ա՞յ։

ԵՂԻՍԱԲԵԹ

Դա անոնց մէջ ղայդայ կայ ,ղանօն կայ, ամէն ինչը իրան տեղըն գեօրայ է. մեր մախլուխնեն անձախ, գրօղս վէրցնէ, ո՛չ էրածները գիտեն, ոչ չէրածները, ոչ կերածներնէ բալըու, ոչ խմածները, ոչա թափածները. անձաղ օսկի ու մարգրիտ ձրգեն ձըտվըները, ու կտօր բրտուձ ըլնան, ոչ իշխնի կնիկ ըլլէնանէ մալում, ոչ ախքտի, անդի ռուռուները մեր ազգին վրայ մէ ղայդայ կխնդան, խօ տեղա ունեին խնդըլու, հը՞մը ինչքան օրա ըլլէնայ ալի մարդու

սիրտը իսպէս մէ թմրուըըմ կըլէնայ, կըսես թէ ցաւի կը։

ԳԱՅԱ՛ՆԷ

Շատ հարկաւորէ թէ կու խնդան մ՞յ, իսկի այնուամ էլ չիմ ձըգում։

ԿԱՏԱՐԻ՛ՆԷ

Քա խօմ Վրացիքն էլ ին խնդում մեր վրայ, ուր թէ ռուսնիրը։

ԵՂԻՍԱԲԵԹ

Քա, ըշտը անքան մարդ կցաւի օր մեր վըրանա կխնդան մեր ղայդին ու ղանօնին չեն հաւնիր, ինչքանա կուզես լաւ ժամ արի, բէմուրազնիրը ալի մէկ այիպըմ կգտնին։

ԳԱՅԱ՛ՆԷ (ընդմիջելով)։

Էդ էնդու համա է վուր, իրանք իսկի վուչ մէ բանում պակասութին չունին, ամեն ինչը նրանցում մօտի վրաէ, քա, տեսնումիս էն ամըղատի կնանիքն էլ չին ջօկնըվում աֆիցերի կընանոնցից։

ԿԱՏԱՐԻ՛ՆԷ

Քա, ատ ըսա, ուրիշ բան մի ըսեր, ես ալ օսմանցուի աղջիկ եմ հըմը հէչ հաղ չեմ եներ, տեսնիմ կը օրա սիրտս կպատռի, իշտը մարանցս օրա կերթամ պաղի, չեմ ուզեր թէ



վրան աշեմ, մուռատութիւնները Աստուած եդուհեռու էնէ, կըսես թէ վրանէրէն կթափի։

ԳԱՅԱ՛ՆԷ

Ապա էդ քու խօսքիրդ, իրանց յերեսումը մէ ասա, իժում կտեսնիս թէ ինչ կօնին քիզ։

ԿԱՏԱՐԻ՛ՆԷ

Էլիսաւէթ ջան, խօմ յիս մէ անգամ ասի Էլմաստին, քա քիչ էր մնա՛մ թէ գըջըլոին ինձ։

ԵՂԻՍԱԲԵԹ

Էհ՜ չէդես օր ադպէս է, մարդ հէչ կրնա՞յ ղըլըղներուն վրայ բերանը բանալ, Աստուած փրկէ աղատէ, քարկոծ կէնեն մարդու։

ՋԱՎԱՀԻՐ (շուարած)։

Խանում, տիհա բիրաղի խանումները գուդան կը։

(Ելլալը մոռցած ատեն) Փառք քեզ Աստուած։

(Հիւրերը ներս են մտնում, իրար բարեւելով ու ջերմ ողջունում)։

ՄԱՐԻԱՄ

Բարեւ ձեզ Եղիսաբէթ տիկին, առողջութիւննիդ ինտօրէ (ջերմ ողջունելով)։

ԵՂԻՍԱԲԵԹ

Լաւ, փառք Աստըծու, ի՞նչ ըզես, լաւ ես, քէֆդ հալդ լաւ է, տըղաքդ ի՞նչըղեն, լաւ են։

ՄԱՐԻԱՄ

Բոլորն ալ ողջ — առողջ։

ԵՂԻՍԱԲԵԹ

Քա աս քանա յուշանալ ըլլենայ, ի՞նչ էղաք տէ յմօր հիմի գալած ըլլենայիքնէ էփէ յի վախտ անցուցերէինք։

ՄԱՐԻԱՄ

Ժամանակնիս դեռ կներէ լոտօ խաղալով։

ԵՂԻՍԱԲԵԹ (կանչէ)։

Ախչի Մարգրիտ, ղայֆայ բեր (բերուած են)։

ՇՈՂԱԿԱԹ

Տէ առէք, ղայֆան, հի՛մը օղորմի հօրէրուդ քիչըմ թեզ էրէք։

ՀՈՒՓՍԻՄԷ

Ը՞ման օղուլթ օր յենինք, յենինք խաղը բասլամիս էնինք։

ՎԱՐԴՈՒՀԻ

Աղջի հէչ չէ մէմ թող ղայֆաս. հալալընդա խըմեմ։

ՍՐԲՈՒՀԻ

Քիչըմ չափուկ էրա դունա քա, տասը ըստաքան օրա ըլլենարնէ, հիմի խըմիր պըծիր էր։

ԵՂԻՍԱԲԵԹ (շարելով լօտօյի խաղերը)։

Տէ՛ հրամեցէք, հաղըրէ։



ՀԵՐԻՔՆԱԶ (հեգնանօք)։

Հա՛, մամաշա, հա՛, ինչի՞, եսա կխաղամ, հա՛, չէ՛մ, ինչի՞, պապաշըս ինձի փարա տուեց, աշէ։ (ցոյց է տալիս)։

ԵՂԻՍԱԲԵԹ (բարկանալով)։

Աօրէր Թուրքի լակոտ, դու ի՞նչ, լոտօն ինչ, քա ձունը գլխուս ասպէսա մախլուխ կըլլենայ, ժամանակուանս աղջկները, Աստուած ազատէ, բօբօլական կրակ են, անտի Աստուած մեր մեղացը կբարկանայ։

ՀԵՐԻՔՆԱԶ (շալով)։

Հա՛ ինչի՞, հա՛ չէմ, ինչի՞, հըպը դու ինչի՞ կխաղաս։

ԵՂԻՍԱԲԵԹ (բարկութեամբ)։

Ը՞ն, փողը գայ գլխուդ, բէմուրադ թաղեմ քէզի, դուն ու ես մէ՞կ ենք, շա՛ն բերած։

ՄԱՐԻԱՄ

Տիկի՛ն, թո՛ղ տուէք որ խաղայ, եթէ արգելելու ըլլաք նորան, դուք ինքնիդ ալ չպիտի խաղաք, նաև ձեր վերջին արտասանած խօսքերնիդ, փոքրիկ աղջկանը, օգուտ մը չը տալէն ի զատ՝ կարող է նորա քնքուշ ու մատաղ բնաւորութիւնը խանգարելու ալ տեղիք ունենալ։

ՇՕՂԱԿԱԹ

Ըմա՛ն ի՞նչ գուլես քա՛, հիմի թող երթայ խաղայ։

ՀՌԻՓՍԻՄԷ

Արի, Հերիքնազ ջան, արի, ես ու դու ըն- կեր էղնինք, լաւ ցի՞ էղնիր. փարաներդ ռըրէ, բեր տէսնիմ։

ԵՂԻՍԱԲԵԹ

(Ծածկելով փարա է տալով Հերիքնազին)։

Մէմա դու ոտքդ աս յօղան կօխէ ու տես, յօմներուս տակը չուրութմիշ կէնեմ, սատա- նի զուռխաղ։

ԳԱՅԱՆԷ.

Քա ի՞նչի ես ծեծում, թող փոր խաղա- ցել էր, խօմ էտէնց երեխեն կու փչանայ։

ՍՐԲՈՒՀԻ

Ի՞նչ կէնիս, չես գիտիր, տըղայ խօ չէ՞ս, աս- պէսա ծէծիլ ըլէնայ՝ ձուռը գլխուս, չէ յետև ղարդիմ դուշ կըլլէնայ։

ԵՂԻՍԱԲԵԹ

Գրողը ալ չի գիպչիր, մի վախենայ, անիկ անպէս ջինս չէ։

ՎԱՐԴՈՒՀԻ

Տէ յէլէք քա՛ սահաթը չորսը զարկեց հէչ



խաբար էք թէ չէ։ (Բոլորը վեր են կենում ու շուր- վում ուղղում շորերը)։

ԵՂԻՍԱԲԵԹ

Դէ փարաները դրէք. (վեր են գալիս)։

ՀՌԻՓՍԻՄԷ

Սըրէն յուսմ՞ն պիտի պասլամիս էղնուի ա- հան տօպրակը։

ՎԱՐԴՈՒՀԻ (ելնելով)։

Տէ՛ թղթերդ ղօրդէցէք, ահան ըսի, տասնը հինգ անգամ թաքըրըլէլու ես բալը չունիմ։ Ահան բազլամիս էրի քարը բռներ եմ, եա Աստուած. պէտ տեսաս տոխն, դըրէք, դէ- վանօսօ, տէ, սօրօկ չրտրի, սեստէսաս սէմ։ (Աչքը յըգվելով դէպի Սրբուհու եղնիկը)։ Քա՛ ձուռը գլխուս թէզա համպօյ էրաւ, հը՞ը մէմ սէյր էրէք։

ՍՐԲՈՒՀԻ (ծափտալով)։

Ըմա՛ն Վարդուն, թէզա յաջըքդ տեսաւ։

ՀՌԻՓՍԻՄԷ

Խօսելու վախտը գտաք, ըմա՛ն, հիմի համ- պօյ էրէր էրէրէ դու տանիլէ խապար տու։

ԿԱՏԱՐԻՆԷ

Դէ ասա Վարդուհի ջան, շուտ արա։

1008 36463

ՎԱՐԴՈՒՀԻ (հառաչելով տխուր)։

Սէմ դեսատ ատին, սօրուկ վօսեմ, դէվեա-նօստօ։ Հէչ տերնոյ ենօղ կա՞յ։

ԵՂԻՍԱԲԵԹ

Քա հէչ լաւ չես ըներ, խաթերս համար մէմ տօպրակը խառնես։

ԳԱՅԱՆԷ

Հա՛ քա, կասենաս դիփ մէ տեսակ է ասում։

ՀՌԻՓՍԻՄԷ

Աղջի ինձ կեղնի ինձի համար ըսիս։

ՎԱՐԴՈՒՀԻ (նեղանալով)։

Է՛, ես ի՞նչ ենիմ, քարնօր չըգայ հաղար տարի ի՞նչ գուզես էրա, խօ յաչուղներս տօպ-րըկին տակը կօխեղու չեմ, ըշտը՛ տիհա թափ կուտամ, փառք աստըծու յաչուղներովդ խօ կտեսնէք։ Ահան հանեցի (լաց խառնելով երգը) տըվա, չըտըրինացտ, հէչ ձէն չէք հաներ, սէմ-դեսատ սեմ, վո՛վ տարաւ։ (Ձեռքը ճակատը դնելով)։ Քա՛, ինչքան կվատէրնոյ ենօղ կայ, անձաղ իմ թըղթերս է որ տերնոյ բէլայ չունիմ, ձունը իմ անշահ հալիս։

ԳԱՅԱՆԷ

Ինձ համար մէ տեսիտ ասա։



ԿԱՏԱՐԻՆԷ

Ինձ համա մէ պէտ։

ԵՂԻՍԱԲԷԹ

Ա՜ման չէ, թօղ ինձի համար ըսէ։

ՇՈՂԱԿԱԹ

Վա՜րդուն ջան, Վա՜րդուն, հօգուդ մեռնիմ, մէմ տօպրակը խառնէ, բալքի միջէն լաւը յէլ-լէ, ձունը գլխուս, կվատէրնոյ բիլա չունիմ, ին-չըղ նուսուբաթ թըղթեր են քա։

ՀՌԻՓՍԻՄԷ

Յիրեք տեղ կվատէրնոյ ունիմ, ան ալ դիդիս, բերադի մէ թըղթիս վըրայ, հըմը ցիմ գիդիր, թէ վո՛վ վիկրատ պիտի ենէ։

ՎԱՐԴՈՒՀԻ (շարունակելով)։

Վօսիմ դեսատ պետ։ . . .

ՀՌԻՓՍԻՄԷ (շտապով)։

Ի՞նց, ի՞նց, ցիմացայ։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ամա՜ն, տասն անգամ օրա ըսել հտաք ի՞նչ կըլէնայ, խուլ խօ չէ.ք, վօսիմ դեսատ պետ, իմացի՞ր հիմի։

ՀՌԻՓՍԻՄԷ

Քա՛ ինց կեղնի, խօ մեկը ցեղաւ երկու անգամ թազըրըրելովդ, է լաւ դու սապըռ էրա,

հալըած մէ օրմա դու կհարցնես, ես անիկ
պիտի միտքս պահիմ:

ՎԱՐԴՈՒՀԻ

Լաւ լաւ, դունա ինձի մի ըսէ: Տրէցըտ վօ-
սեմ... վօյ տղայ: Տըվացըտ տըւա,... հէչ
ձէն հանող չկայ, պէտ դէսատ բօխնոյ, ըմմն
դաղայ, տէ տարէք:

ՀՈՒՓՍԻՄԷ

Աչլ՛սաքէթ պածի, մէկ մէկ հատ հանիս
ի՞նչ կէղնի, հօգուդ մեռնիմ:

ՎԱՐԴՈՒՀԻ

Ոռն ահան, ըմմն մէկ մէկ հատ չէ հըպը
ի՞նչ է. տըվընացդ... տանօղ չկայ: Տրէ...
սեսա... դէ, ձէն չէք հանիր, տըվայ... վօյ
դուզէր, ահան, (ցոյց տալով), տեսէք տըւա:

ԿԱՏԱՐԻՆԷ (մէր կենալով):

Նա վիկրալա, թէ գուզես Վարդուհի ջան,
պամէրին ալա, հա. սօրուկ պէտ, տրէցըտ շեստ,
դէվլէտնացը, տեխտ, նուրմա ասածդ դըվա, դը-
րուսաէ. քա մաիկ արէք դինտունանքդ էլ (տալ-
բունը տալիս է Մարիամ տինջնոշը):

ԵՂԻՍԱԲԵԹ

Մարիամ ջան, հոգուդ կը մեռնիմ փայլըղ
անպէս ըսա օր ես տանեմ:



ՇՕՂԱԿԱԹ

Չէ՛, չէ՛, թող առաջ ինձի համար ըսէ:

ՀՈՒՓՍԻՄԷ

Նա գիտեմ անիկ ինձի համար կըսէ, ցուն-
քի՛ ես անոր համար սատ եմ ըսեր:

ԿԱՏԱՐԻՆԷ

Աչքի յիս պիտեմ տանի, էսուր իմ բաղդը կա-
սէնաս բացած էլի:

ԳԱՅԱՆԷ

Մայեա ջա՛ն, գէնացվալէ, թէ ինձ կու սի-
րէս ինձ համա ասա:

ՄԱՐԻԱՄ (ծիծաղելով):

Ինչո՞ւ այդպէս կշփօթուիք տիկիններ, անի-
կայ ի՞նչ կնշանակէ, ես սա քարերը մէկիկ մէ-
կիկ պիտոր հանեմ, ո՞ւմ որ բաղդը շուտ բէ-
րելու ըլլայ՝ անիկայ պիտի տանի, իսկ թէ որ
հնար ըլլար՝ ես շուտ մը ինձ համար պիտի
ըսէի, քան թէ ձեզի, ինչպէս որ ամէնքնիդ ալ
տասնակ կցանկաք, տանկ չէ՞ մի...

ՍՐԲՈՒՀԻ

Իշտը խօսքի պակասութեն չի՞ն գիտէր օր աղ-
պէս է:

ՄԱՐԻԱՄ

Սա թղթերնիդ պատրաստեցէք, թմահա-

մարդ պատրաստ է. քսան և չորս։

ԵՂԻՍԱԲԷԹ և ՇՕՂԱԿԱԹ

Վա՛, քանը չորսը ի՞նչ է. ուռուսճվար ըսես եայ։

ՀՌԻՓՍԻՄԷ

Ես ցիմ հասկընար հայերէն, Մարիամ պածի, Աստուած սիրես ուռուսճվար ըսա, մէկ մա պէտք է որ ինձի դիլընդուլթեն էնէ։

ՎԱՐԴՈՒՀԻ, ԿԱՏԱՐԻՆԷ, ԳԱՅԱՆԷ, ՍՐԲՈՒՀԻ (ներսեն)։

Մայեա ջա՛ն, ուռուսէրէն սաա, քսան ու չորսը ի՞նչ է, վո՞ր նուշքրնա, մենք չենք հասկանում։

ՄԱՐԻԱՄ

Ատիկայ շատ զարմանալի է, որ դուք հայերէն չգիտէք, բայց ինչո՞ւ ռուսերէն գիտէք ու հայերէն չէ. ատիկայ չըլլար, որովհետև ես հայի կին ու հայի աղջիկ եմ, պէտք է որ ըսելէքս հայերէն ըլլայ, նա մանաւանդ, որ սա տեղս ռուսի կին չըկայ, բոլորդ ալ հայի կանայք էք, և մի՞թէ ամօթ չէ, որ այս տեղի հայի տիկինները հայերէնը, այո՛ իւրեանց հայրենի լեզուն, խօսելու անգամ կըտկարանան. ցաւալի՜ է . . .



ԵՂԻՍԱԲԷԹ

Ամա՜ն, էտ մուռտառ լեզուն, ես չեմ հասկընար, եանի ատ ի՞նչ լեզու է որ, հողս ատոր հնձարողին գլուխն, անպէտս կոշտ է որ, կըսես կօպըլօվ մարդու գլուխն կզարնեն խօսած վախտերը, սաքի ուռուսներուն լեզո՞ւն է, կակո՜ւզ։ Աստուած օրհնէ իրենցա իրենց լեզունա . . .

ՇՕՂԱԿԱԹ

Ամա՜ն, օղորդ կըսէ Եղիսաւէթը. հըմը ինչ յաշխարքին միջի յամմէն լեզուներու գէշն է, ջըֆտի լեզուն, քրտի լեզուն հազա՛ր ղալթ լաւ է. հնարք ըլլէնար մարդ փօխէր. իլլահի ուռուսերէն գիդէնար ու լաւ խօսիր։ Վա՛, անոնց խօսած վախտերը՝ կըսես թէ Աստուած միջները կփափսայ. անո՜ւշ անո՜ւշ, անպէս անո՜ւշ որ, մարդ քիչ կմնայ թէ խօսօղին առնէ հոգուն մէջ կօխէ . . .

ՄԱՐԻԱՄ

Հրամանքնիդ եթէ ատանկ կսիրէք ռուսերէն լեզուն, եթէ քիչ մ'ալ միտք դարձնելու ըլլայիք մեր սեփական լեզուի վրայ, այն միջոցին, դուք պիտի տեսնայիք թէ, հայու բարբառը ո՞րքան քաղցր է։

ՀՌԻՓՍԻՄԷ։

Ըմա՛ն, թաղիմ անոր հնձարօղին գլօխը, գիւվայ մաթայ է գտեր, խօսը հէցա բանի պէտք ցի գար, խօսու լեզու գըլմանի, ուռուսէրէնինացին հաւներ, ինչըղօր Մարիամ պածին, հայի լեզուն, խօսը հիմի հէցա մօղա ցէ, վօվ օր ուռուսէրէն գիդէ տէսնիս կը օր յամմէն սեղա պատիւ ունի, ուր օր էրթայ 'նէ յամմէնքէնա վեր կնստեցնին. հիմի գիդինք օր (դէպի Մարիամը), դու լաւ գիդիս հայերէն, հըմը օրա ուռուսէրէն լաւ գիդէնայիր, խօս ցէ՛իր ըսիր քըսանը ցօրս։

ՄԱՐԻԱՄ

Ձեր հրամանքնին, տիկիններ, ընդունայն տեղը անպատուելու ջանքը կընէք ձեր նախնեացը և՛ի զուր կվատաբանէք Հայոց լեզուն, վատաբանելով լեզուն, կվատաբանէք հայութիւնը (չափազանցած որ ըսեմ չէք), ու օտար ազգերուն առաջը տեղիք կուտաք ձեր վրայ ամուր մը խնդալու, բայց ես ռուսաց լեզուին վերայօք բոլորովին վատ համարմունքը մը չունեցայ. տայ Աստուած ամենքդ ալ գիտենաք ու նորա հարկաւորութիւնն ալ ես կճանչընամ, սակայն ուրանալ իւր հայրենի լեզուն ատիկայ



տիկիններ՝ աններելի է։ Մենք, սա տեղս ժողովուած բոլորս ալ հայի կանայք ենք, ուրեմն, պարտքերնիս է մեր սեփհական լեզուն գործ դնել և ո՛չ ուրիշ լեզվով, և եթէ ճըշդութեամբ քննելու ըլլանք, ոչչափ ամօթ (Կատարինէին ըսելով), որ դորանով սովորութիւն կըլլայ. դառցաւ սովորութիւն, անհետանալու պատճառ կընայ ըլլալ մեր լեզուին, երբ անհետացաւ լեզուն, այն միջոցին կանհետանայ մեր պանծալի ազգութիւնը, ու այս դիպուածներուն մէջ, կըրօնը, իւր հին դարերէ մնացեալ աւանդութիւնը կը կորսնցունէ . . .

ԳԱՅԱ՛ՆԷ։

Ո՜հ, մեծ բան էր մի՜. հայերը վուր լաւ ըլէին, հիմի նրանք էլ մէկ մեծ մարդ կուլէին . . .

ԿԱՏԱՐԻ՛ՆԷ։

Չէ ու էսէնց կումնային էլի, հալա լաւ վուր ապրումին ռուսի թագաւորութենի զօրութենով . . .

ՄԱՐԻԱՄ

Սա լեզուս կկարկամի պատասխան տալու ձեր ըրած հարցերուն, իմ միակ լռութիւնս թող ըլլայ ձեր պատասխանը, միայն սա կըսեմ, թէ կափսոսամ ձեր հասկացողութեան վերայ։

Մենք ժողովուած չենք այդ օրինակ հարցե-
րով պարապելու, առինկայ երևելի քաղաքա-
գէտներու բանը թող ըլլայ։

ԵՂԻՍԱԲԷԹ

Ո՜չ քա, Թարկը տունէք օղորմի հօրերուդ,
հիմի իմ տանս մէջ պիտի կռուիք իրար հետ,
հայերէնս առանձին . . . ատա իմ քոռ իղբալս է ըմա՜ն,
թէ Աստուած կը սիրէք Թարկը տունէք։

ՀՌԻՓՍԻՄԷ

Քա՛, հըմը մէմ տիս թէ ընցէր ցի խօսիր,
հայերէն լաւ գիտէ դէյի, խօս եսիր էղնէլու
ցինք, գիւվայ "Լօտօ,, խաղլու էկանք մէ օ-
յինըմ խաղցինք ցը խաղցինք ղըլըըղին ըն-
կաւ, ատա իմ Թալահս է էղէր. էս սաբըթու
հեց ցէի խաղցիր, անպէս հաւատովըմ էկայ օր,
գիդիս թէ տասը կրուղ ես պիտի վիկրատ էնէի։

ՇՈՂԱԿԱԹ

Ո՜չ, Մարիամ օղորմի հօրդ Թարկը տուր,
մէկմա նես գայ ի՞նչ կըսէ, կուխններուտ բանիմ
վրայ ըլլենայ անա մէ բանըմ, պիտի յետև ը-
սեն թէ խելըրեր են հայի լեզուի համար կը-
ռիւ կենեն իրար հետ։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ըման ի՞նչ էղաւ ձէկի բիրադի խելըրաք



Աստըծու գըդնիք, հէչ մէկը մէկին չի հասկը-
նար, յէ՛լէք յէ՛լէք էրթանք, փողը իմ անշահ
հալիս. ես գիդէնայի թէ Մարիամը էս տեղ
էր խօ չէի գար, կէրթայի դօխտուրենցը, տասն
անգամ յետևս մարդ էկաւ. գլօխն 'ի քար հա-
մու փոտայ խօ կառնէի, ինչքան չըլլենայ . . .
տուն էր, ղաթի Մարիամը ուր տեղ օր ըլլէ-
նայ, անտեղ մէ ղայղայ ղալմաղալ պիտի ըլլէ-
նայ ու ըլլէնայ։

ՄԱՐԻԱՄ (տալով չօտօյի տողերունը)։

Նկատելով, որ իմ ներկայ ըլլալովս ձեզ ու
ձեր խաղալուն արգելք պիտի ըլլամ, ատոր
համար, սա իմ հեռանալս պարտք մը կը ճա-
նաչեմ. երա՜նի թէ, երկու ժամ առաջ մտա-
ծած ըլլայի ու բնաւ չգայի ձեր ժողովին մէջ.
. . (դէպի Եղիսաբէթը)։ Հրամանքնիդ ալ տի-
կին ներողամիտ ըլլանիդ կաղաչեմ, որ սա ձեր
տան մէջ անբաւականութիւններ պատճառելուս
համար . . . (մէր է կէնուան)։

ԵՂԻՍԱԲԷԹ

Քա՛ յո՞ւր, հոգիդ կսիրես նստէ, հէչ կթող-
նեմ օր էրթաս, խաղը վերջացնենք յետև, վա՜-
յի ձունը գլխուս քա, առանց չայ խըմելու,
դուն անոնց վրայ մեծ ես քիչըմ. անոնց խօս-

քը բանի տեղ չպիտի դնես. գիդեմ խաթերըդ ալ քիչըմ դիպան, հը՜մը իմ խաթերս համար զարար չունի, ձէն մի հաներ. Աստուած սիրես նստէ քիչըմ ռահաթէ, հերսըտ թող իջնի, քա՛ ձունը գլխուս գայ, կնիկ մարդնա ասպէս հերս ունենայ։

ՀՕՂԸԿԱԹ

Է՛, չէղես օր, գիդունները բէրադի ատպէս հերսոտ կըլլենան կը։

ՀՌԻՓՍԻՄԷ

Զահթի ասխարքը գիդուններուն յերեսէն է քանդըրվել։ Ինչ բան օր ըսես անոնցմէն դուս կելլէ ․ ․ ․

ՍՐԲՈՒՀԻ

Գոզիմ, գոզիմ, մեր աղանս քա՛ բաղի բարքըն օր վրան կըլլենայ կընէ, կըսէ թէ, մեր Անին օր տակնուվրայ էղեր է, գիդուններուն յերեսէն է բէրադի ․ ․ ․

ՄԱՐԻԱՄ (ճռչնատալով)։

Թողութիւն ըրէք, Սրբուհի ջան, հրամանքնիդ կըխալվիք. անիկայ թէ և կարդացած է Հայոց պատմութիւնը, բայց կաճնամ հրամանքնիդ զրուցածներէն, որ բոլորովին հասկընալու ջանքը ըրած չէ, թէ որ պատմութիւնը կարդըցած ըլլար հասկընալու համար, ատանկ ծուռը չպիտի դատէր, Անուայ, սա քանդըրվելու և ոչ տակն ու վրայ ըլլալու պատճառը, գիդունները չեն իմ հոգիս, հապա, սա մեզի նման օտարասէրներից, անմիաբանութիւնից ու ազգատեաց մարդիկներուն յերեսէն ․ ․ ․



ՍՐԲՈՒՀԻ (այլայլուած)։

Ա՜յի ձունս, հիմի դու էնքան էղար օր չէս հաւնիր հա՛, հը՜ը հը՜ը մէմ ախս թէ ինչի՞ր դուս կուտայ, մէ ղօճայ աշխարքըմ մեր աղայի խելքին մաթէ մնացիր, հիմի ակաս մակաս դուն էիր պակաս, օր էնուր խելքին չէս հաւնիր։ Ը՜ն բաղտաւէլար։

ՄԱՐԻԱՄ (ծիծաղով)։

Հրամանքնիդ, քոյր ջան. կսխալուիք, բոլոր աշխարհը երբէք չի կրնար ատանկ մարդու մը գոհասանել, ինչպէս ձեր հայրը. անիկայ կրնայ նշանակութիւն ունենալ այն տեղերուն մէջ, որ տեղ որ խաւարը պատած է, կրթութիւն չը կայ ու եսականութիւնը տիրած է, ինչպէս սա ․ ․ ․ իսկ հրամանոցեդ սա խնդիրը միայն կընեմ, Սրբուհի քոյր, որ քիչ մը պարկեշտօ-

րէն ընթանաք խօսակցութեան առեննիդ ու խոհեմ ըլլաք, նա և կրքով չգործեցէք ուսկէ կառաջանայ անպարկեշտութիւն . . .

ՍՐԲՈՒՀԻ (նեղանալով):

Կիրքն ի՞նչ է, Աստուած սիրես կտոր բըրտուճ մի ըլլենար, հայերէն խօսէ. մենք Ստամբօլու լեզու՝ ան ալ գրաբա՞ռ, չենք հասկընար, մենք քեզի պէս գիւղուններէն չենք (ծիծաղ), կըսիս թէ, Վրացու շան պէս կհաչէ մարդու վրայ:

ԳԱՅԱ՛ՆԷ

Քօ՛, ի՞նչ էլաւ ձեզ, վա՜յմէ դէդա ջա՛ն, թէ խաղլու ենք՝ խաղանք, խօմ չէկա՞նք էստի մուշտայ կռիւ սարգելու:

ԿԱՏԱՐԻ՛ՆԷ

Վա՛, չէ՞իր իմանում վուր, վուրդի վուր Մայէն գնա էնտի կռիւ կու սարգուի հայութէնի համա, մէ ուրիշ բանի վրայ էլա ըլէ՛ ո՞վ կու հոգայ:

ՄԱՐԻԱՄ

Թողութիւն ըրէք որ ըսեմ, տիկին Կատարինայ, ատիկայ ի՞նչ կնշանակէ ‘‘կռիւ,, մի՞թէ իրար հետ խօսելու կամ դատելու ըլլանք ո՛ և



իցէ առարկուի մը վրայ, կռի՞ւ պիտի համարուի: Ո՛չ, ատիկայ սխալ կարծիքմ՛է:

ԵՂԻՍԱԲԷԹ

Ըմա՞ն ըմա՞ն, Աստըծու սիրուն ըլլենայ փանծըրէցէն անցնողը որ հիմի յանկարծ էնէ ի՞նչ կըսէ, պիտի ըսէ թէ բիրադի խէլըրներէն, ասպէսա խալխութեն կըլլէ՞նայ վո՜ւյի. ձունը գլխուս:

ՀԵՐԻՔ՛ՆԱԶ (վազելով):

Մամաշա, տիհա Եօսիֆ դեադաս ու Իւան դեադաս գուգան կը:

ԵՂԻՍԱԲԷԹ (ուրախանալով):

Ղո՛րդմէ կըսես:

ՀԷՐԻՔ՛ՆԱԶ

Աստուած վկայ:

ՀՌԻՓՍԻՄԷ

Փա՜ռք քեզ Աստուած որ էկան, առանց կավալերի Լօտօն ի՞նչ համ ունի: Ափսոս որ սատ-յուս էկան:

ՇՈՂԱԿԱԹ

Օղո՛րդ օր, առանց էրիկ մարդու հարամէ տեղ էրթալը, ատիկ բէմուրաւթ ուռուսներուն է տուած չէ թէ մեր օսմանցւոց: Ի՞նչէ Հօ-

ումնիմայ դըռ թեզէ, թող զան ալ մէ քա-նիմ ցլին բալքի հալալընդա խաղանք: Գիշեր-նա յերկան մարդ քնելէ ղառրի կը, ելաքիմ պազի աղին գլօխն օր տաք կըլլենայ կըւպէն գուզայ կը՝ արթըղ մարդ պէտք է օր կըշտէ կուշտ ընկնի, ելահի քունն ալ օր փախաւ, արթըղ ղառի սատին ղառի անդին չորս ու փալակի պէս, մարդու սապըռնա կոտրիկը՝ տէյ-մոր լուսանայ: . . .

ԳԱՅԱ՛ՆԷ:

Դա՛ դէռ վաղ է բաս ինչ:

ԿԱՏԱՐԻ՛ՆԷ:

Մէ երկու կըուղելէ խօմ կու խաղանք:

ՎԱՐԴՈՒՀԻ

Ը՝ման չէ, ես կերթամ, տըղաքս հըճըպ հի-մի ի՛նչ կենեն:

ՍՐԲՈՒՀԻ

Տէ, ծուրկ ծուրկ մի զար հիմի, մէ երկու կըուղալ է խաղանք յետև մէկ տեղ յենինք երթանք. ալայի մալայի մէ ցլինըմ խաղու խօ-չէկանք, անճաղ օր հիմի պիտի մէ լաւըմ խա-ղանք, ան ալ կավալէրներու հետ օր տանինք:



ՄԱՐԻԱՄ (մէջ է կեցած ու դիմած դէպի Եղիսաբէթը):

Մնաք բարեաւ, յատուկ շնորհակալ եմ, սա ձեր կողմէն ցոյց տուած հիւրասիրութեանը:

ԵՂԻՍԱԲԷԹ (ընդմիջելով):

Դա՛, կեցի մէ կոտրըմ, հօգուդ մեռնիմ, տէյ-մոր Եօսիֆ Պետրովիչն ու Իվան Անդրէիչը զան. տիհա անոնքա գուզան կը, աչէ: (Մա-րիամը ակամայ նստած է, հիւրերը գալիս են):

ԵՕՍԻՖ ՊԵՏՐՈՎԻՉ (Եղիսաբէթի ձեռքը համբուրելով):

Ա՛, ինչպէս էք, լաւ էք (Եւայ Բոլոր հիւրերին Եւրոպական ձեւով ծանօթանալով բարեւում ու իւ-րաքանչիւրի ձեռքը բռնում: Իւան Անդրէիչը նո-տարուած է մենակոյնը):

ԵՂԻՍԱԲԷԹ

Տէ, հրամմեցէք նստեցէք, ի՞նչի ասպէս յուշացաք:

ՀՌԻՓՍԻՄԷ:

Ախպար ձան, ձուր տեղը էիր:

ԻՒԱ՛Ն ԱՆԴՐԷՅԻՉ

Իսկի, հէչ մէ տեղ էլ չէինք, Եօսիֆ Պետ-

բովիչի հետ ճաշից ետոյ, սեկրետարենից տուա-
նը, Թուխմ կխաղայինք։

ՃՕՂԱԿԱԹ

Յօսիփ ջան, ազատ տուն եկա՞ւ Թէ չէ։

ՅՕՍԻՓ ՊԷՏՐՈՎԻՉ

Չեմ գիտեր, ես էլ Իւանն էլ ճաշէն սեկ-
րետարի քով էինք . . .

ՃՕՂԱԿԱԹ (ընդհատելով)։

Ետ ի՞նչըղ է եղեր որ, հացէն յետև յասօր
չես քներ։

ՅՕՍԻՓ ՊԷՏՐՈՎԻՉ

Որ տեղից քնէի որ, ճաշէն յետև մէկ պուլ-
քայ պրոֆերանս խաղացինք, ետոյ էլ դամերը
կպան եախէքս եարալաշ խաղալու, չկարողա-
ցանք օտկազատսեա ըլէլ, էն էր որ դուս է-
կանք, ըսինք էրԹանք մէկ Իլլիգավէտա Անդ-
րէեւնի մօտ, տէսնենք Թէ ի՞նչ են շինում էն
տեղ։

ՀՌԻՓՍԻՄԷ

Թայմինայ ըսիր Թէ, ախպարսա անտեղ էր,
անպէս ցէ՞, Յօսիփ Պէտրովից ձան։



ՅՕՍԻՓ ՊԷՏՐՈՎԻՉ

Ես առանց ձեր հրամանոց ախպօրը, ո՛չ մէ
տեղմա չեմ էրԹար։

ՍՐԲՈՒՀԻ

Մեղա՜յ մեղա՜յ, ատպէս որ սիրով էք, հա՜։

ՃՕՂԱԿԱԹ

Աստուած սիրով պահէ։

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ

Մենք ձեզի պէս չէինք, որ Լօտօյի էրԹանք
ու հայի լեզուի համար կռիւ ձըգենք։

ԵՂԻՍԱԲԷԹ (մէջ կենալով)։

Վա՜յի, ձունը գլխուս, Թեզա խաբարը տեղ
է հասեր, յո՞ւմէն լիմացար Իւան ջան, յո-
տուընկերուտ տակը կմեռնիմ, մեմ ըսա։

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ

Մարդից չիմացայ, հըմը՜, ձեր յամուր յա-
մուր խօսիլը, որ բիրժը դուգար կը։

ՀՌԻՓՍԻՄԷ

Վա՛յ, հը՜մպը ան ի՞նչ էր, ան ի՞նչըղ երար
խառնուանք (դէպի Մարիամը)։ Տէսար Մա-
րիամ պածի, աւէ, քաղքին մէջ խայտառակ
էղանք, ի՞նց է, Լօտօն հայերէն ըսելու հա-
մար ուռուսերէն օրա ըսէիր, խօ մարդ ցէր ի-
մանար. համօայ տէ յմօր հիմի տասը կրուզայէ

խօ խաղցած կըլլէնայինք։

### ՄԱՐԻԱՄ

Հռիփսիմէ, հոգիս, իմ խաղալուս նպատակը այն եղած չէ, որպէս զի, ձեզանէ քանի մը դրամ դրպանս լցնեմ. ու թէ որ ես հաւաստի եղած ըլլայի, թէ իմ զուրցածներուս համար խայտառակ պիտի ըլլաք, առաջինը որ, բոլորովին չէի գար, իսկ երկրորդը ակամայ կուլէի, որպէս զի, լռութեամբս վիճաբանութեան պատճառ չըլլայի. բայց կը զարմանամ, որ սա տեղս վիճաբանութիւն ըսուած բառը կռուի ու անբաւականութեան դեր կխաղանկոր։

### ՍՐԲՈՒՀԻ

Ի՛ , է, տէ՛ լաւ, մենք ի՞նչ էրէինք որ քէզի, դու խալալ տուէր մեր խաղէն, տէյմոր հիմի յիցուն անգամ խաղցիր էինք։

### ԻՒԱ՛Ն ԱՆԴՐԷԻՉ

Ախըր ձեր ի՞նչ գործն է, որ դուք հայերէնի վրայ խօսէք կը, ամօթ չէ՞, էտիկ տըղայ մարդու բան է. կնիկ մարդու բանը, ա՜յի Լօտօ խաղալ, տանցափատ անել ու . . .

### ՅՕՍԻՓ ՊԵՏՐՈՎԻՉ

Ըսէցէ՛ք պաժալուստա, ախըր ի՞նչ կխօսէիք։



### ԵՂԻՍԱԲԷԹ

Ըմա՜ն, հէչ։ Լօտօ ըսէլու սրան օրա էկաւ Մարիամին՝ հայէրէն ըսաւ, մենքա չհասկըցանք, ըսինք որ թեաքըրըրէ՝ ուռուսէրէն ըսէ, անիկ չըսաւ, թէ ես հայի կնիկ եմ պիտի որ հայէրէն ըսեմ, յետև, իշտը քիչըմ իրար հետ ղալմաղալ էրին. չիտես կնիկ մարդու բան, յիրէք սահաթէ որ դըռ մէ օյինըմ ենք խաղցէր, ինչ լաւ որ էկաք, առանց կավալէրի օղորդ որ հարամէ էղել լօտօ խաղալը։

### ՎԱՐԴՈՒՀԻ

Քրիստոս վկայ, ինչըղ որ կըսէ Եղիսաբէթը՝ ատպէս է։

### ԻՒԱ՛Ն ԱՆԴՐԷԻՉ

Մարիամ խանում, հրամանքներդ, ինչըղ որ կըլմանի շատ թունդ ազգասէրներիցն էք, որ ուրիշի բառ չէք կամենում բերանդ առնել։

### ՄԱՐԻԱՄ

Այո՛ պարոն։ Սա ձեր վերջին ըրած արտասանութիւնը շատ ուղիղ է։

### ԻՒԱ՛Ն ԱՆԴՐԷԻՉ

Հըրը յառաջինը։

### ՄԱՐԻԱՄ

Առաջինը առաջնոյ համար. ինչպէս ձեր

հարցումները, նոյնպէս ալ իմ պատասխանները շատ յաճախորդ կըլլայ, որովհետեւ, ազգասիրութիւնը անանկ մէկ բան մէ, որ երբէք, սա մըթութեան վարագոյրին տակ մնալ չէ կարող, գործքը՝ այո՛, միայն մարդուս գործքը կարող է ապացոյց ըլլալ մարդուս արժանաւորութեանը:

ՅՕՍԻՖ ՊԷՏՐՈՎԻՉ
(Դէպի Իւան Անդրէիչը):

Դա՛, դա՛, էտոյ սովերշէննօյ սպրավէդլիվօ· դրուստ է հրամայում Մարիամ խանումը, էդպէս է:

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ

Ներեցէք, որ ես ձեզ լաւ չէի ճանաչում, ձեր հրամանոց հետ խօսելու վախտը, պէտի մարդ շատ աստարօժնօյ ըլլի:

ՄԱՐԻԱՄ (ընդմիջելով):

Թողութիւննիդ կխնդրեմ պարոն, սա "աստարօժնի,, բառը ի՞նչ ըսել է, ես չեմ հասկընար, եթէ կարելի կըլլայ կխնդրեմ շնորհ ընէք հայերէն բացատրելու:

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ (շուտով):

Իզվինիտէ իզվինիտէ, աստարօժնի բառը (ճա- [illegible]) ա՜խ, չօռտ վաղմի, մոռացայ լեզվիս վրայէր, ա՜խ տի բօժէ մօյ,



(դէպի Եղիսաբէթը)· ըսեցէք պաժալուստայ, դուք սլօվար չունիք:

ԵՂԻՍԱԲԷԹ

Սլօվարը ի՞նչ է:

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ

Գիրք է ռուսերէնից հայերէն:

ՅՕՍԻՖ ՊԷՏՐՈՎԻՉ

Դա՛, ինչո՞ւ է պէտք սլօվարը: "Աստարօժնօյ,, ասելը, Մարիամ խանում, էն ասել է, որ եթէ ես, ձեր հրամանքի հետ խօսելու լինիմ. պիտի շատ մուղայաթով խօսիմ . . .

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ (ընդհատելով):

Դա՛, դա՛, դա՛, մո՛ւղայաթ մո՛ւղայաթ:

ՅՕՍԻՖ ՊԷՏՐՈՎԻՉ (շարունակելով):

Որ չլինի թէ հրամանքդ նորա մէջ պակասութէն գտնես:

ՄԱՐԻԱՄ

Այո՛ պարոններ, ատիկայ հիմայ ինձ հասկանալի եղաւ: Այդ "մուղայաթ,, ըսել չէ, հապա զգուշութիւն, իսկ "մուղայաթ,, բառը սա տաճկերէն է եւ ոչ հայերէն:

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ (շուտով):

Ա՜խ, վինովատ վինովատ, զգուշութիւն ըզգուշութիւն, գիտեմ որ գիտէի:

ՄԱՐԻԱՄ

Ներողութիւն ըրէք պարոն, որ ձեր արտասանած խօսքերը բոլորովին նիւթ չունին, դուք ինքնիդ ալ, ինչպէս ես կնշմարեմ, ձեր խօսածնին անգամ հասկընալու կարողութիւնը չունիք։ Հրամանքնիդ զգուշացէք այն գործքերէն, որոնք ձեր պատուին կարող են անարգանք հասցնել. իսկ ձեր խօսակցութիւնը ինձ հետ, թէ որ անկեղծօրէն ըսելու ըլլամ, շա՜տ տաղտկալի է . . .

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ (կարմրելով)։

Զգուշ ըսելով չպիտի նեղանայիք Հրամանքնիդ, նորա համար որ դա մեծ պատիւ է ձեզ համար։

ՄԱՐԻԱՄ

Այո, իրաւ է իմ համոզմունքս, որ ըսելիքնիդ հասկնալու ընդունակութիւնը չունիք . . .

ՀՌԻՓՍԻՄԷ (բարկանալով)։

Է՛, ախպար, հոգուս կմեռնիմ, էլ, հիմի դու անոր հետ գլօ՞խ պիտի ջէլլես, էլ էլ խաղանք։

ԳԱՅԱՆԷ

Քա՛, դէ վէ կացէք վա՛։



ԿԱՏԱՐԻՆԷ

Յիս ահան թղթերը կու դրըսատեմ։

ՄԱՐԻԱՄ (դէպի Հռիփսիմէն)։

Կխնդրեմ որքան կարելի է պարկեշտօրէն խօսեցէք և ոչ թէ . . .

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ (նեղանալով)։

Ներողութիւն, նա պարկեշտ է, ձեր հրամանքը կամենում էք նորան անպատուել, բայց լաւ ճանաչեցէք, որ ես նորա եղբայրն եմ։

ՄԱՐԻԱՄ (ծիծաղելով)։

Ա՛տ ի՞նչ կուզէք հասկըցնել պարոն, եղբայր մի կըլլաք, ազգական մի կըլլաք ի՞նչ կուզէք ան եղէք, ի՞նչ բանով կարող էք զարմացընել զիս, կարծեմ ոչինչով։

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ

Ձեր հրամանքն ալ, Մարիամ խանում, չէք կրնար ինձի զարմացնել հայերէն լաւ գիտենալովդ։ Հայերէն լեզուն հիմի այդ տարիներուն մէջ ամենևին բանի տեղ չի բռներ՝ տօ եստ, այսինքն անքան պատիւ ունի ուռուսներուն մէջ, ինչքան օր քրտի լեզուն։

ՄԱՐԻԱՄ

Ես չեմ ցանկար, որ հրամանքնիդ զարմանաք իմ հայերէն գիտնալովս, ատիկայ մէկ սուրբ

պարտքմնէ մեր ամէն մէկ անհատին վերայ կնքուած, որպէս զի ուսանինք մեր մայրենի լեզուն, և ի՞նչ ճաշակ, ի՞նչ քաղցրութիւն պիտի ըլլայ այն խօսակցութեան մէջ, երբ պարտաւորուած է զանազան օտար ազգաց բառերուն հետ խառնել, և միթէ ամօթ չէ որ ձեր հրամանքնիդ տկարացաք բառ մը թարգմանել ձեր հայրենի լեզուաւ, ու ստիպուեցաք սա բառ գրքին մէջ որոնել. տխկայ ցաւալի է։ Իրաւ կզուրցեմ, երբ կտեսնիմ սա ձեզանման երիտասարդները, որ փոխանակ յարգելու իրենց սեփհական լեզուն՝ կանարգեն ու կարատաւորեն, ես առաւել որքան անպատուութիւն է ձեզ համար, երբ մէկու մը հետ խօսելու ըլլաք նէ ակամայ պիտի պարտաւորուիք ըսելու թէ "ես հայերէն չգիտեմ և կամ, թէ որ ձեւացնէք իբրև գիտցող՝ պարտաւորեալ պիտի բառ գրքով խօսիք, ինչպէս պահ մը առաջ ըրիք. որքա՜ն զզուելի բան, և որքա՜ն անտանելի, եթէ միայն զգալու կարողութիւնը ունենաք . . .

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ (տատանելով շփոթուած)։

"Ներեցէք պաժալուստայ, որ ես . . . ը՜նդա . . . գործ ունեցայ . . . ձեզ հետ . . . վիզիտէ . .

Ի՞նչպէս պատուիս էք դիպչում . . .



ՄԱՐԻԱՄ (ծղրտալով)։

Պարո՛ն, կխնդրեմ, կաղաչեմ, որ հրամանքնիդ խօսիք այնպէս, ինչպէս որ ամէն անգամ կխօսիք ձեր տանը մէջ. կնշմարեմ, որ հրամանքնիդ կուզէք խօսիլ Հայկական ոճով (գեղեցիկ ձըկտողութիւն), բայց կախտոսամ, որ կմոռանաք և Երաբացուցը։ Հայկական ոճը (թուղութիւն ըրէք որ ըսեմ) պրուֆէրանս խաղալ չէ պարոն . . .

ԻՒԱՆ ԱՆԴՐԷԻՉ (քաջութեամբ)։

Ձեր հրամանքը շատ աւել պակաս խօսքերով բէարուռ երէք ինձի, բայց ես վէզիտէ . . . դա՛, ինչպէս կավալեր՝ պէտք է տանեմ դամի սանծը . . .

ՅՕՍԻՓ ՊԷՏՐՈՎԻՉ

Կանէչնօյ, կանէչնօյ, տակի սլէդուէտ, եղպէս էլ հարկաւոր է։

ԵՂԻՍԱԲԷԹ

Է՛, արթըղ, Աստուածներդ կսիրէք թարկը տուէք՝ հերիք է, ի՞նչ եղաւ ձեզ, քիցուն սահաթէ թղթերը սարդեր հաղըր եմ էրեր։ Յելէք, յելէք խաղանք, մեղայ Աստըծու սապէսա կրակ ըլէնայ, կըսես թէ ղօնաղ էրի օր գան իրար մաէ ուտեն (փորձելով Գոյանէին տալով)։

*Գուրամ, Գուրամ, առ Աստուած կսիրես բաս, անոնց խօսելուն վերջը խօշ գալու չէ, ես ադ լաւ գիտեմ: Աշան թղթերը, մէ լաւըմ խառնէ ու բաժնէ* (տալիս է):

(Վարագոյրը իջնում):

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Վարագոյրը վերցնելիս երևում է միևնոյն սենեակը: Բոլոր հիւրերը նստած շարունակում են «Լօտօն». Բացի Մարիամ տիկինից, Իւան Անդրէեվիչից և Իօսիֆ Պետրովիչից, որոնք սենեակի մէջ անկիւնում նստած, ինչ որ պարապած չինին խօսելով իրար հետ: Իւրաքանչիւր հիւրի առաջին դրած չինի քարաքով Ռէս, ու սեղանի վրայ դրած շաքարեղէն ու անուշեղէն ուտելիքներ և միևնոյն միջոյին ընդ չինի «Լօտօ» խաղացողների համարների չոյնը:

### ԽՕՍԻՓ ՊԵՏՐՈՎԻՉ

*Ը՜ն տակ, տակ, Մարիամ խանում, ես չգիտէի, որ դուք այդքան ազգասէր էք, որ «Պրոֆէրանս» խաղացողին չէք համարում ազգասէր. Նապրօտիւ, եթէ որ այդպէս է, ասելէ թէ և «Լօտօ» խաղացողները միևնոյնը են:*

### ԳԱՅԱՆԷ:

*Պէտ...*

ԻՒԱ՛Ն Ա՛ՆԴՐԷԻՉ

Ինչպ բը։

ԳԱՅԱ՛ՆԷ

Դրվացըտ . . .

ՄԱՐԻԱՄ (շփոթուած)։

Պարոններ, ձեզանէ առաջինը եթէ խառնելու չըլլար մէկ բառ օտարի լեզուաւ, դա ինձ անհասկանալի է և վերջինը թէ ինձ հետ խօսելու չըլլար այն լեզուաւ, իցէ կարող ըլլայի պատասխանը տալու, բայց ապաբախտաբար, ես լաւ չեմ հասկընար այդ լեզուն, իսկ դուք չէք հասկընար ձեր մայրենի լեզուն, ուրեմն, շատ աւելորդ կըլլայ մեր իրար հետ զրուցելը առանց թարգմանի։

ԳԱՅԱ՛ՆԷ

Սորոկ պէտ . . .

ՆՕՍԻՖ ՊԷՏՐՈՎԻՉ (բարկացած)։

Ներեցէք, որ մենք կխօսինք իսկ հայերէն, քանի մը տեղ՝ դա . . . ը՞ն . . . դա . . . ուռուսերէն խօսելներս . . . դա . . . վիշխոէ . . . ուրիշ ոչինչ բան չէ, կակ տոլկոյ պրիվիչկա . . .

ԳԱՅԱ՛ՆԷ

Հ՛եստնացըտ . . .



ԻՒԱ՛Ն Ա՛ՆԴՐԷԻՉ

Ուսմի ծառայութեան մէջ, նեպրեմեննոյ, տօեստ անպատճառ նիօբխոդիմոյէ, նրա համար, որ մենք պօստոյիաննոյ, նորանց, հետ ենք նստում կաղնում։

ՀՌԻՓՍԻՄԷ

Ադ ինչըղ կսես, հէց մէկ հատմա ցունիմ։ Աստուած սիրիս լաւերէն ըսայ։ . . .

ԳԱՅԱ՛ՆԷ

Վ՛ուր չէ գալիս, ախըր ի՞նչ անիմ, ա՛յ. վօսիմ դէսատ։ . . .

ՄԱՐԻԱՄ

Այո, գիդիմ պարոն, կճանչընամ ձերին գաղափարը, ատիկայ և մասամբ լուսաւորութիւն կ՚կարծէք, բայց չարաչար կսխալվէք, մի՞թէ ծառայական պաշտօնի մէջ ըլլալը կպահանջէ, որպէս զի, ձեր լեզուն մոռնաք, ատիկայ անկարելի բան է։ Մի՞թէ լաւ է, որ դուք հիմա կտկարանաք. սա ձերին միտքը հաղորդելու, ձեր հարազատ բարբառաւը։ Ատիկայ, պարոն լուսաւորութի՞ւն մի կհամարէք դուք . . .

ՆՕՍԻՖ ՊԷՏՐՈՎԻՉ

(Ընդմիջելով) Ներեցէք Մարիամ խանում,

դուք կուզէք ըսել որ մենք լուսաւոր մարդ չենք. խաւարուած ենք, բայց միք մոռէհան էներ, որ մենք օսմանցի չենք, մենք ուռուսի չինովնիկներ ենք:

ԻՒԱ՛Ն ԱՆԴՐԷԻՉ

Ձեր հրամանքը սլեշկոմ չափից դուրս գուգաք:

ՄԱՐԻԱՄ

(Բարկութեամբ ընդհատելով): Ներեցէք, ես բոլորովին չափաւորութեան մէջ կպահեմ գլխս, և երբէք թոյլ չեմ տար մարդկային սահմանքէն դուրս ելլալու, իսկ ձեր սա օտարոտի միրտը ու հոգին նաև մարդու գզուանք պատճառող քաղաքականութիւնը (պօլիտիկա), որի մէջ չըկայ անգամ պարզութեան հետքը, ստիպեցին գլխս, քանի մը խօսք արտասանել, սա ձեր տըւած հարցումներուն համաձայն, որուն նախապէս դուք ինքնիդ պատճառ եղաք (Վեր է կենում): Մնաք բարեաւ, կարծեմ ժամանակ է իրարմէ բաժնուելու:

ԻՕՍԻՖ ՊԷՏՐՕՎԻՉ

Ի՞նչ էք շտապում, Մարիամ խանում, կըխօսէինք մէկ քիչ էլ:



ԻՒԱ՛Ն ԱՆԴՐԷԻՉ

Դեռ թէզ է:

ՄԱՐԻԱՄ

Ո՛չ, դեռ յուշ է, շուտ պիտի գնացած ըլլայի:

ԳԱՅԱ՛ՆԷ

Շէստդէսատ ղլադկի (ռուսերէն гладкій, դուզ):

ԻՕՍԻՖ ՊԷՏՐՕՎԻՉ

(Դէպի Իւան Անդրէիչը): Գնանք Մարիամ խանումին պրավաժատ անելու:

ԻՒԱ՛Ն ԱՆԴՐԷԻՉ

Սը բալշիմ ուդովոլստվիեմ, ես պատրաստ եմ մինչի տունը երթալու, եսլի անա պազվոլիտ:

ԳԱՅԱ՛ՆԷ

Դիվա . . .

ՄԱՐԻԱՄ

Շնորհակալութիւն ձեր մարդասիրութեանը (Ձեռք տալով դէպի Նիկոլայենը): Մնաք բարեաւ, տիկին, իմ շնորհակալութիւնս կ՚յուսամ որ պիտի ընդունիք (Բոլորին հետ բարեւելով յետոյ դուրս է գնում):

ԳԱՅԱ՛ՆԷ

Սեմ. . .

ԵՂԻՍԱԲԵԹ (վերցնելով)։

Լըրթաք բարեաւ։ Աղջի Մարգրիտ, պօղլին մեմ ըսա թէ, թող Մարիամ խանումին տանի տէյ մօր տուն ճանբու դնէ։

ԳԱՅԱՆԷ։

Սէմտեսաղ տէվխտ . . .

ՎԱՐԴՈՒՀԻ (երեսը խաչակնքելով)։

Փա՜ռք քեզ Աստուած, որ չըքուեցաւ. քաշկամ երկու սահաթ առաջ ջիհանըմից։

ԳԱՅԱՆԷ։

Վա՛յ, ձէն չէք հանում . սեմնացդ . . .

ՇՈՂԱԿԱԹ

Վա՛յ, մարդու գլուխը խելք մնաց որ, թըթերուն աչէ. Զուռը գլխուս, Աստծու բօրբոլական կրակնէ էղեր, հետը խօսիլ չի էլլէնար. մէմս տեսար բերանը կբանայ, խլահի մէջը եա ռուսերէն, եա Թուրքերէն խառնիս, մէմս տեսար կպաւ եախատ, կըսէս թէ սիւրուկ ըլլէնա։ (ընդհատ գոյնելով) Գու՛րան ջան, Գու՛րան, հոգուդ կմեռնեմ, մէմ գլխէն ըսես ինչ կլլէնայ, թայմենայ ղալդերեմ։

ԳԱՅԱՆԷ։

Լա՛ւ կուլի, ա՛յ գիփունանկտել մուխք տուէք Պէտ . . . Սորոկ . . . պէտ . . . դըվացըտ . . .



չեստնացտ . . . վոսեմդէսեատ . . . շեստդէսեատ տվա . . . տվա . . . սեմ . . . սեմտեսեատ դէվյտ . . . սեմնացըտ . . . դիվ ասի (տօպըտնը խառնելով)։ Ահան հանումեմ, մունկ արէք, ստարիկ (Ղ девяносто). . . վա՛յմէ դէդա ջան, ինչ փիս քարեր է գալիս։

ՀՌԻՓՍԻՄԷ։

Աստուած սիրէք, ա՛րէք էտուր դուրս անենք մեր պարտէզն միջէն, թէ չէ խաս աստից յետև վոց գուզամ, վոցա, ձունը գլխուս անիկ խօ մըր ընկերը չէ, փառք Աստըծու մենք բըռաղինսա ցընոմէկի կնիկ ենք, անիկ վօմէ օր, մէ մուզըկլիմ կնիկ, անոր հետ նստիլ չէլլէնայ, մեզի համար մեծ այիպէ, Փարազի մենք մեր պատիվը ցիտենք, տէսնողը ինչ թուքումուր կուտայ մեզի։

ԳԱՅԱՆԷ։

Ա՛յ բանդ կտրուիլ է։ Տրիցըտ աղին . . .

ԿԱՏԱՐԻՆԷ։

Գրուստ է ասում Հռիփսիմէն, էդ թահար խալխի հետ վուր նստիս կաղնիս, իրանք էլ ինք իրանց մի մեծ մարդու տեղ կու դնին կասնաս թավատի աղջիկ պարուն ըլի։

ԳԱՅԱ՛ՆԷ

Ա՜, ո՞նց չէ, իրա սիրտը դիպչէնայ: Պէտնա-ցըտ . . . Կասէնաս մի մեծ պավլէտէնիկումնա կուրսը պրծիլ: Գէժլոտ . . . Ա՜, արդուն, ինչխ ուզում, սորվ ասին . . . կասէնաս էն մունդ-ուրկը թղթերի վրայ անիծեց. գիժատվացէ, ես էլ դեռ բան չունիմ: Եղինիցա . . .

ԵՂԻՍԱԲԷԹ

Էս անոր բնութինը ղաղի վաղուց գիտէի, հըմը ինչ պիտի էնես, մէկ անգամ մարդուն հետ վիզիտ էկաւ, անէր ասէր՝ արթըղ էղանք բարեկամ. է ղոնաղ որ ունէնաս՝ չիշես օր չը-կանչես չի ըլլէնար, կանչես ասնէ, իշտը տէսաք ձեր յաչմնէրովը, փառք Աստծու, տահա ը-սէնա լայիղ չէ, հըմը, լաւ չի էնէր. օղլուշաղն ինչ, աղպէս ծուրկ մուրկ ըլլէնալը ինչ, ինչ կէ-նէ իրէն կէնէ, փողս տամ գլխուն, իշտը ա-նունինա Եկնիկալթակէ:

ԳԱՅԱ՛ՆԷ

Է՜ ինչ եմ միքը անում, շատ հարկաւոր է: Պէտդէսատ պէտ . . . տըվացըդ ադին . . . տը-րիցըդ վօսեմ . . . վօսեմդէսատ դէվիտ . . . վօսեմ դէսատ րովնօ (նայէլով չորս կողմը): Ա՜ս տոպրակումը քարերը դիփ դուս էկան: Սէմ



դէսատ ադին . . . վօսեմ դէսատ դվա . . . շէսատ դէսատ ադին . . . շէսատ դեսիատ դէվիտ . . . փառք քեզ Աստուած, չուրսէցի: Ա՜, օսեմ . . . չետիրի . . . Ո՜ն, հուզիմ գլուխդ՝ տրոյկայ . . . վա՜յ գժուէլին, ադինացըտ . . . Տէր Աստուած էսէնց էլ կրակ կուլի՞, դվացըտ սեմ . . . Օ՜ բեզարեցի, (տաքրանէն խառնէլով): Տրիցըտ տրի. մէկ էլ չուրսէցի. էս լաւ բան էլաւ:

ՎԱՐԴՈՒՀԻ

Քա՛, ես հըլը հէչ մէ տեղըմ չորս չունիմ, աս-պէս կրակ կըլէնայ, ինչըղ ուղուրսըզ թղթերին, Աստուած, հըմը բիրաղինա կըսես թէ նու-սուբաթցերին:

ՀՌԻՓՍԻՄԷ

Հալբաթ օր կնուսուբաթնան, գրօղս յէլլէ նաֆսին, անպէս մարդ կար օր, հէչ քար կէլլէ:

ԳԱՅԱ՛ՆԷ

Էս նումուսին լաւը կու հանեմ. տրինա-ցըտ . . . սորուկ չետիրի . . . պէտդէսատ տրի . . . շէսատ դէսատ պէտ . . . մէ թղթի վրայ յիրեք տիղով չուրս ունիմ: Սէմ դէսատ տրի . . . վօ-սեմ դէսատ վօսեմ . . . Ա՜, ուր չէ՞ գալիս:

ԿԱՏԵՐԻ՛ՆԷ

Ցիս էլ չուրսէցի, փառք քեզ Աստուած:

## ՇՈՂԱԿԱԹ

Ես ախրըստ բերելս չունիմ, փողը գլխաւս:

## ՇՈՂԱԿԱԹ

Վալլահ, ես կվատրնոյ շատ ունիմ, հէմը տեսնինք թէ վերջը ինչ պիտի ըլլենայ:

## ՍՐԲՈՒՀԻ

Աստուած սիրես մեմ տօպրակը լաւըմ խառնէ բալքի տըկէն լաւը կելլէ:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Ծիրանի Մարիամին, ջերեաննէ, գիտէ՞ք, մէ անգամ բանը չափռաստ ընկաւ, որի Հռոփսիմոյ մի ըսէր թէ ան վով, օր մեր կրուղին մէջը ընկնի, իշտը մէ անգամ կրակնինք ընկեր:

## ՇՈՂԱԿԱԹ

(Գոյանէն պաղատում է տօպրակը խառնէլով):

Ի՞նչ, դուք գիտէք թէ ապէս է, ինչ օր կըսէք, հըլը մեմ խրան էլ հարցուցէք ու տեսնէք թէ ինչ կըսէ. հէչ կըսէ՞ թէ Աստուած ձեզի հոգի է տուեր, ինչ է հայերէն քիչ ումիշ բան գիտէ:

## ՀՌԻՓՍԻՄԷ

Ա՛յ, հիմի ինչ էնինք թէ հայերէն գիտէ, ուռուսերէն օրա չի գիտի՞. բանը ուռուսերէն



գիտենալն է, ուռուսներուն հետ նստիլ ելլելնէ, ցինովնիկի կնիկ ըլլենալնէ, թահա՛, մէ մուկիկիմ կնիկ, կըսիս թէ հայերէննա, մէ մատտահ բանըմէ, խօր մէ անդայրայ լեզուն, մարդու ուշմիս բերեյ չի գար, իլահի ղըղըները, գրողս վերցնէ, տեսնիմ կը օրա, կըսիս թէ սիրտըս խոպես մէ թափուրմ կըլլենայ:

## ԿԱՏԱՐԻՆԷ

Ետ խօմ ղըրուստ է, ամա նա իրա համար մեծ պատիւ պիտի իմանայ, վուր մենք լայղինք անում, նրա հետ, նստելու, կաղնելու, խօսելու, վեղետ գնալու, ճաշի մեծրելու վուր մէկն ասեմ, ամա Աստուած վուր գլխին քար է ձըգել չի ուզում իմանալ, ինչ պիտիս անի:

## ԳԱՅԱՆԷ

Թուէ մէկ էլ տեսա՛, Թօ՛ղ պարծէնայ ու փըքվի, ջիս վուր էստուց դենը էլ նրա հետ չպիտիմ խօսի, կասէնաս հոգին սուրբ իմացելյիտ, ախըր նա խօմ էկաւ, ինձ մօտ վեղետով, ամայիս դեռ ստ—պլատիտ չիմ արի: Հանամեմ ա՛յ, սեմզէսատ տրի:

## ԵՂԻՍԱԲԵԹ

Հէ՜մը թէ էրերես, քեաշկամ ես ալ աղպես էնէի, ոտքս կօտրիր չէրթայի:

## ԳԱՅԱՆԷ

Վ՚ուսեմ դէսաա վըսեմ, ըն հուշիմ գըլուխդ։

## ՎԱՐԴՈՒՀԻ

Է՛ հիմի ի՞նչ էնինք, գնացիր գնացեր ես, աստից յէտև ալ մի երթար. ես ալ գնացեր եմ հըմը՜, շատ բան, աստից յէտև թող իշտա՜հ էնէ թէ ալ ի պիտի էրթամ։

## ԳԱՅԱՆԷ

Շեստ։

## ՇՈՂԱԿԱԹ

Աստուած ոչ էնէ մէմալ ես անոր տունը ոտք կոխեմ, տուննա սատկի ինքնա, անիկ վօվ, ես վօվ, ո՞վ փօղս գլխուն, կըսես թէ լօլօշ ըլլէնայ։

## ԳԱՅԱՆԷ

Զեալինացըտ . . . ո՞վ քիզ բան։

## ՀՌԻՓՍԻՄԷ

Է՛, հիմի մահտահըմ ըլլէնար խօ ցէր գայ մեր քաղաքը, վօ՞վ գիտէ հըծը՞պ ինցը՞զ բօս բօղազի մէկնէ էշըր. գիավուրիզմիլն ո՞ւր մեր քաղաքն ո՞ւր։ Խասը տէսնես վռնտիրին, ինցին, էրիր, վօ՞վ գիտէ։ Էկիրէ օր գուվայ մարդուն հետ վարզապէտութին էնէ՝ աղըրկներուն համար զավէզէնիա բանա։ Մեր մարտին իւանից-



նա յանորը, հըմը թէ ձուհապը տուիրէր . . .

## ԿԱՏԱՐԻՆԷ

Մէ զավէզէնիա բաց անողի՛ս թամաշ։

## ԳԱՅԱՆԷ

(Բարկացելով)։ Դա խժում ձեր խօսքերին վերջը պիտի ըլի թէ հենց նրա վրայ պիտի խօսէք, մինչև վերջը։ Տրեցըտ սեմ։ Ձեր ի՞նչ բանը, բոլքայ սատանէքերանց պիտի գաս տայ։ Ախըր ո՞վ է գժուել՝ վուր իրա աղջիկը նրա մօտ տայ։ Պէտնացըտ։

## ԵՂԻՍԱԲԵԹ

Ըմա՞ն ադպէս մի ըսիր, մեր իշանը կուտան, իլահի վարի թաղում մարդիքը, հայերէն կարդըլու համար, մամաները կսես թէ դողկէլլէ, հալբաթ օր լաւ մարդը, իշխանը, չինավնիկի կնիկը, իրէն աղջիկը ադպէս տիղեր, հէչ խնըքէ, կուտա՞յ, տէ յմօր ուշուսերէն լաւ չըգիդէնայ։

## ԳԱՅԱՆԷ

Թէ Աստուած կուսիրէք շուտ արէք, էսէնց էլ կըրակ կուլի քա. պետնացըտ . . . վուրղանց վուրդի էն մունդուիկը յէսուր էկաւ էստի։

## ՎԱՐԴՈՒՀԻ

Ըմը՞ն քա, դունա ինչի՞ կնեղանաս, հըպը

սուտ խօ չէ՞, անոր քով մի՛մ կուտայ որ տէյ-մօր ռուսերէն, ֆռանկըզերէն չգիտենայ, ա-տոնցէն ղայրի մուզիքան կսովրեցնեն, գիտես ինչ մուզիքանը՝ գեղինը մտած ուռուսներուն կնիկ-ներն օրա մատըներովը կչալեն, մէ թավուրմ անուն ունի, ըման թէրմաշ մնայ լեզուս վը-րան է գիտես . . . հա փօրտօբանէ կըսեն, ի՞նչ կըսին իշտը անէ „фортепіано“:

ԳԻԱՅԱ՛ՆԷ

Հա, հա գիտեմ: Դըրվացըրտ պեատ, վուր տանցավատ էլ են անում նրա վրայ:

ՌՈՂԱԿԱԹ

Հա քա իլահի անղայղան, որ էրիկ մարդ ու կնիկ մարդ, փաթթուած օրա կխաղան, մար-դու հավասը գուգայ, բէմուրաղները կըսես թէ մէկ մէկ տոլս ըլլէնան, սաքի մեր փէշէշօրիկ վերվերն է, իլահի ինչ մուռտառ եա ու առա-ջը ու կլօր պարը, խատակ կըսեն թէ մէյմուն կխաղցնեն . . .

ԳԻԱՅԱ՛ՆԷ

(Ռուսով): Քա էլ բան կայ թէ չէ: Տը-վացըրտ ղըվա, ո՛վ տալաւ էսէնց էլ Աստծու բարկութիւն կուլէ, քա: Տըկցըրտ դէվլտ:



ՀՌԻՓՍԻՄԷ

(Ռուսի մէջ Ռուսերէն): Նա վինկրալա: Ահան աշէ. տվա, սեմ, տըրիցըտ տրի, սեմդեսաթ դե-վիտ, տրիցըտ դեվիտ, վոսեմ:

ԳԻԱՅԱ՛ՆԷ

(Տօպրանէը ընելով ուղտնի վերայ): Փառք քեզ Աստուած վուր պրծանք:

ՀՌԻՓՍԻՄԷ

Ըմա՜ն տէ յէլէ՛ք յէլէ՛ք, էրթանք տներս կեօ գիտիր է էշիր, ձունը գլխուս, հիմի Մի-խակը, ձանս դուս գայ, լաէն մեռաւ, Նանկա-նա ցիտիմ ո՞ւր է ցըգվիր, պրացկանա բիլօն պիտի բերիր, ցիտիմ բէրէ՞ց թէ չէ:

(Ռոլըր հնարները մէջ են կէնում և ներսին գրուած երգը ասելով եառ գնում են)

Յասօր մենք էկանք „Լոտօ“ խաղալու,
Հըմը՜, բանիրս չյաջողից մէնկրաշ էնէլու.
Գիռ մի կըուզը թամամ չփրծած,
Գըըըղէն ընկաւ մէջն խաղու:
Մէկը մէկի լեզուն չի հասկանում,
Զարերն ալ եսիր իշան տոպրակի միջում,
Աս ինչ դէշ օրէ ձունը գայ գլխուս

Ոտքս կոտրիր քեաշկամ մեր տանում։
Հայերէն օրս կխօսեն՝ սիրտս կմաշի,
Հոգիս դուրս գուգայ, քա չիտեմ ինչի՞.
Ռուսերէն օրս կխօսին . . .
Կսիս թէ հոգուս մէջ կփառաւորի,
Ըման հոգուդ կմեռնենք մենք բերադի,
Մէմ ալ Մարիամին մի կանչէր „Լօտօյի“։
Գիրոքս անոր վերցնէ, ցաւս թող տանի,
Օր անիկ մեմա մեր մէջ չմնի.
Ռուսերէն չի ուզեր, Հայերէն կըսէ,
Ի՞նչ է՝ կտորըմ Հայերէն լաւ գիտէ։
Կտոր, բրդուճ, տըրակ տըրակ գուգայ,
Մեր վրանալ մեղայ դայ քթին տակն կխնդայ։
Հիմի մենք կերթանք, Էլիասֆէթ ջան.
Տիհա մութն է ընկեր, աշերը կերևնան.
Հըմը բամծս միտքդ լաւ պահէ,
Մէմա դու անոր մեր մէջ մի կանչէ։
Թաղեմ անոր արևն ու գլօխը,
Օր անիկ վեգլեթովըմ դառցաւ մեր ընկերը։
Մենք Եամբու փառք, բերադինա,
Զինովնիկի կնիկ՝ գիտենք ռուսերէնը.
Ըման հազար ամօթ մեր անըմին,
Փօշը մեր գլխուն, ծուն մեր հալին,



Օր մեզի ընկեր փէթայ եըինք,
Մուժիկի կնիկ, գիավոր Խղմիցին։
Թող անիկ երթայ ըղղայ դաս տալու,
Հայերէն կարդալ գրել, սովրեցնելու.
Մենք կերթանք բալ, աքեղի, ղակուսկու
Ճաշերից յետև ալ՝ Լօտօ խաղալու։
Թող ասպէս, ուրախ գնա մեր օրեր,
Ռուսներուն մէջ՝ մեր ժամանակներ։

(Մարտագոյքը նշանած է)։

ՎԵՐՋ.

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Կարի հարկաւոր եմ համարում յայտնել իմ ընթերցողներին գրքոյկիս միջի երկու գլխաւոր թերութեանցը, առաջինը. որ թէպէտ հարկաւոր էր, գրքոյկիս միջի օտար ազգաց բառերը նօտըր գրով շարել, որպէս զի բացառութիւն լինի Հայերէնից և երկրորդը կազմել մի բառարան օտար բառերի, բայց ինչպէս առաջինը նոյնպէս և վերջինը ինձ դժուարին թուաց, որովհետև մեծ մասը օտար լեզուա լինելով և նոցա, այսինքն գործող, անձանց սովորական բարբառը հարկաւոր էր համարեա ամբողջ գրքոյկը նօտըր գրերով շարել, նոյնպէս և ամբողջ գրքի համար կազմել մի բառարան և գրգոյկին տալ մի մեծ գիրք, այն է երկու թերթը չինել չորս, ի հարկ է այն ժամանակ կրկնապատկելով և գրքոյկի գինը, բայց որովհետև մեր Հայերիս մէջ առ հասարակ քիչ է



վաճառվում, ո՛չ թէ այս օրինակ մի չնչին աշխատութիւնք ինչպէս իմ „Լօտօն“, այլ և ուրիշ երևելի մարդկանց հանճարեղ գրչից դուրս եկած գրքերը, այս հանգամանքից ստիպուած, բաւականացայ հրատարակել առանց բառարանի խնդրելով գերարգոյ ընթերցողներից նոցա ներողութիւնը:

19285

2013

80